



ԲԱԺԱՆՈ՞՞՞ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	
Տարեկան	12 ծր.
Վեցամսայ	6 »
Արսասահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսայ	8 »
Անկերիկայի համար	
Տարեկան	3 ռը.
Վեցամսայ	1.50 »

ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Մանուգնակ տոյ առաջին երեսին համար 40 սանթիմ կ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ կ. երեքին սանթիմ անկերիկայի համար 20 ՕՊ զեղջ կրչայ :

Պուշկարիոյ համար ձեռքի
(15 ՍԱՆԹԻՄ)

ՇՈՒԱԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇՈՒԱԿ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ գրամ դրկեյ
Խնքագրութեան հասցէին

R. P. Kalémcarian
(Autriche)

Mechitharistangasse W. 4 1a.
Vienne

du journal
«Charjoum»

Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ յն սրուիք

Արսասահմանի համար ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)

Ա. Զ. Դ.

Թաղական խորհուրդս նկատելով որ կարգ մը ազգայնոց կողմէ կազմուած մէկ քանի ընկերութիւններ ըստ օրինի վատերացուած չ'են ազգային պաշտօնական մարմինէն, ներկայիս կազմարարէ անոնց որ իրենց կանոնագրութիւնները վաւերացրելու համար փութան մինչեւ յառաջիկայ հոկտեմբեր 1 ներկայանալ Խաղ. խորհրդարան : Հակառակ պարագային Թաղական խորհուրդս պիտի պարտաւորի այդ ընկերութեանց ամէն գործառնութիւնները դադարեցնելու համար : պէտք եղած օրինական միջոցներուն դիմել :

Ի. դիմաց. Թաղ. Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ
Ս. Դարբինեան Յ. Մ. Թովմասեան
Վառնա 13 Սեպտեմբեր

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Չինական խնդիրը հիմայ նոր շրջանի մը մէջ մտած է : Յարձակողական, պատերազմական շրջանը այլ եւս վերջացած է : յուզեալ ու խառնաշփոթ կացութիւնը որ արդարն ու մեղաւորը, յանցատրն ու անպատրք քով քովի կուրի գաշար նետուած էին եւ որ սուրն ու վառօթը կը տիրապետէր միահեծան, հիմա պարզուած, յստակուած է, ու եւրոպական գաշանակից զօրութիւնները յանուն խաղաղութեան, Երկնային կայսրութեան մայրաքաղաքին մէջ, կը վիճարանին վեղջնական համաձայնութեան մը գալու եւ ազատուելու համար այս անակնկալ պատահասէն՝ որ պահ մը եկաւ խռովել եւրոպական գիւտնագիտութեան արդէն իսկ մութ ու մոռյլ հորիզոնը :

Թաղաղութեան յաւիտենապէս ինքնակոչ այս պահապաններուն մէջ կարեւորագոյն տեղը եւ ամենէն ազդու ձայնը ունի մանաւանդ Ռուսիա, հիւսիսային կիկլոպը որ տարիներէ ի վեր զըձուած որոշ ծրագրի մը կէտ առ

կէտ գործագրութեան կը հետեւի սյուր :

Երբ չինական զօրութիւնը խորտակուեցաւ եւ եւրոպական գաշանակից բանակին Բէքինի տիրանալու լուրը Եւրոպա հասաւ, ամէն մարդ համոզուեցաւ որ չինական «սօփաճի»ները այլեւս ուրիշ ապաստան պիտի չի կարողանան գտնել : Եւ իրենց գործած գաղանային նախճիրներուն արդար ու արժանի պատիժը անվրէպ պիտի ստիպուին կրելու : Ամբողջ քաղաքակիրթ ու մարդասէր աշխարհը ուղեց հրճուիլ գէթ այս անգամ մարդկութեան նախատինք ու ամօթ բերող արարքի մը հեղինակներուն արդարութեան առջեւ դատուիլը մտածելով :

Գերմանիան, որ երբեմն անտարբեր ու պաղարիւն 300,000 հայերու սրախողխող ջարդուիլը գիտած էր, այս անգամ քաղաքակիրթութեան ախոյանի դերը որոշեց ստանձնել, որովհետեւ խնդիրը իր գեապանին վրէժը լուծելու եւ իր անպատուուած գրօշը փրկելուն վրայ կը դառնար, եւ ասպետ Վիլհելմ այդ կարգի նախատինք մը անձայն կրելու համար ծնած կայսր մը չէր բնաւ :

Բայց վերջին խօսքը Ռուսիոյ կը մնար : Եթէ Հայաստանի մէջ ջարդուած հարիւր հազարներով անմեղներու ոգրն ու կոծը գիւրկի մը սառն անտարբերութեամբ գիտելն ու ճիւղիլ մը հրճուանքով փայփայտիլը Գերմանիոյ թեթեւօրիկ կայսեր հաճելի կերեւոր իր Թուրքիոյ մէջ ունեցած շահերը ապահովելու համար, հիմակ ալ Ռուսիոյ գործին եկած էր որ Չինաստան յաւիտենապէս խառնաշփոթ կացութիւն մը ունենայ, եւ իր թեւարկութիւնը, հեազհետեւ աւելի ազդու ու աւելի շեշտուած՝ անպակաս պահէ Երկնային թագաւորութեան վրայէն : Ռուսի մերժեց այդ պայմանը :

Յայտնի բան մըն է որ, երբ այնքան անխղճօրէն քրիստոնեաները ջարդող բիրտ պօքսէրները անպատիժ ու արձակ համարձակ կրկին Բէքին վերագառնան, եւ

կայսրն ու կայսրուհին յանդիմանութիւն մը իսկ չի լսեն կատարուած եղեռնագործութեանց պատճառաւ, որոնց մէջ իրենց մտը գտնուիլը անխժտելիօրէն հաստատուած իրողութիւն մըն է այսօր, Բնականաբար, անոնք ալ տաւիլի սանձարձակ պիտի չարունակեն իրենց անլուր շահատակութիւնները, նոր շփոթութեանց, նոր յուզումներու տեղի տալով, մինչեւ այն օրը, երբ Ռուսիա այլ եւս պատեճ ժամը հասած նկատելով հզօր թեւարկութեամբ մը երկրին խորերը թափանցէ ու իր հսկայ թաթը խրէ Չինաստանի սրաին մէջ :

Այն օրէն Չինաստան Ռուսիոյ ճորտը կը դառնայ եւ ծայրագոյն արեւելքի ինքնուրուագիւծ ընդ միշտ կը փակուի այլ եւս : Ով որ Ռուսական գիւտնագիտութեան խաղերուն քիչ շատ հետեւած է, պիտի հասկնայ թէ առաջին անգամ չէ որ Ռուսիա այս ծրագրին կը հետեւի : Հայաստանի ջարդերուն ատեն ալ ճիշդ նոյն ընթացքը տեսցաւ : Անիկա բացէրաց քովալերեց մեծ մարդասպանը, որպէս զի աներկիւղ շարունակէ իր վայրագ ջարդերը, ամէն վստահութիւն, գաղտնի ու յայտնի համաձայնութիւն ցոյց տուաւ անոր, պաշտպանեց զայն, լոկ այն դիտաւորութեամբ որ Հայաստան անվերջ խռովութեան մատուցի եւ օր մը իր թեւարկութիւնը աւելի ապահով կարողանայ տարածել երկրին վրայ : Սակայն Թուրքիա իրորամանկ գտնուեցաւ ու շուրջ անձնատուր չեղաւ Ռուսիոյ :

Չինաստան ալ պիտի կարողանայ այնքան ճարպիկ գտնուիլ : Իսկապէս շատ յուսալի չէ : Բայց սա յայտնի է որ, Թայրագոյն Արեւելքի խնդիրը, ինչպէս Արեւելքեան խնդիրը երկու խոշոր Գորպեան հանգոյցներ են, իբրեւ յաւիտենական սպառնալիք կանգնած Ասիոյ երկու սահմանածայրերուն վրայ, որոնք օր մը չէ օր մը պիտի փոթորկեն Եւրոպայի բռնազբօսիկ խաղաղութիւնը :

ՇՈՒԱԿ

ՄԻՏԲԸ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ ՄԱՐԴ-
ԿԱՅԻՆ ՅԱՌԱՋԻՒԹՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Գ.

(Շար. 257 քիւռն)

Արդէն ցոյց տուցի անցեալ յօդուածովս կրօնական դաստիարակութեան բացարձակ անյարմարութիւնը ներկայ սերնդին համար : Եթէ համարձակէի ամբողջովին պարզել իմ մտածումս առհասարակ դաստիարակութեան մասին, պիտի ուզէի պնդել թէ մանկավարժութեան հաւատոյ հանգանակը կամ վերջին խօսքը պէտք է ըլլայ առանձինն մարդը պատրաստելու անկարողութեան իր անկեղծ խոտուղանութիւնը : Պիտի ուզէի որ մանկավարժութեան բոլոր հեղինակները ու օրինագրքերը մեզի անդադար յիշեցնէին թէ ո՛չ ուսուցիչ ո՛չ լաւ դաստիարակութիւնը ժողովրդեան անվերջ շրջանը աղիւնքը չեն : Այսինքն կանխապէս կատարուած հաշուի մը, սկզբունքներու, կանոններու, հնարքներու ներդաշնակ համաձայնութեամբ չէ որ հոգիները կը կազմուին : Եթէ անհատական ձեռներեցութեան ոգին բոյն չէ դրած թէ՛ ուսուցչին, թէ՛ ուսանողին բոլոր ձգտումներուն ու իղձերուն խորը, դաստիարակութեան բոլոր հնարքները, կրթական բոլոր պաշարները ապրողին կը լցուին փակ շտեմարաններու պէս յաւիտենականօրէն ամուլ մնալու դատապարտուած մտքերու մէջ : Ուսեալ քաղմահմուտ մտքով օժտուած ուսուցիչներ ունենալը սքանչելի բան է, եւ սակայն, անիկա բոլորովին անբաւական եւ անօգուտ կը դառնայ, եթէ մարդ շարունակ իր նիւթին գերին մնայ, անոր տիրանալու, զայն ըստ պարագային վարելու, ճկելու ազատ ու համարձակ թոխը չունենայ, այսինքն եթէ արուեստագէտ մը չըլլայ :

Գիտական դաստիարակութիւնը եթէ նախընտրելի է մեզ համար, պատճառը այն է որ, իր բոլոր մեթոտներուն եւ հնարքներուն մէջ այս գերագոյն նպատակը դնել կը ձգտի : Ազատ մտքի պատրաստել, քննելու, բաղդատելու, ըրածին վրայ անդրադառնալու, եզրակացնելու եւ մանաւանդ, իր եզրակացութեան մէջ յարատեւելու կարող մտքեր : որոնք իրենց գործունէութեան պատճառն ու արդիւնքը կը փնտռէ ոչ թէ իրենց մէջ գուրս անծանօթի մը մէջ, այլ բունիսկ իրենց հոգեբանական վիճակներու եւ իրենց կամքին անվկանդ կորովին մէջ :

Եւ որովհետեւ մտքի եւ կամքի այս ազատութիւնը միս մինակ չի

կրնար գոյութիւն ունենալ երկնքին
և երկրին մէջ առկախ, գիտական
գաստարակութիւնը կը ջանայ կա-
րելի եղածին չափ մտային հզօր եւ
առողջ սովորութիւններ պարզեցնել
տղուն, անոնց մէջ մարմնացնել ա-
զատութիւն, խկաստիպ ու տնկաշ-
կանդ յղացումի, յանգուզն ու գի-
տակից գործունէութեան վտա սէրը:

Առարկաները քննելով, անոնց սար-
ուածքը, անոնց անցած փուլերը,
գոյութեան շարժառիթները եւ ոչըն-
չացման պայմանները ուսումնասիրե-
լով, աղան կը վարժուի ալ աւելի
անգայթ վստահութիւն մը ունենալ
իր վրայ, ուշադիր ըլլալ, անկեղծ-
րէն քննել, խստիւ դատել, յաւա-
կօրէն խորհիլ եւ վճիռ ու ճշմարիտ
կերպով արտայայտել իր մտածումը:

Եթէ լաւ, ճշմարտապէս ազատ ու
գիտական գաստարակութիւնը այն
է որ ամէն բանի մէջ ու ամէն կեր-
պով հոգին կազատ նախապայտու մ-
նքնու գերին ըլլալու եւ զայն զօրա-
ւոր, ինքզինքին տէր կը դարձնէ
լոկ բնական օրէնքներու ենթակայ,
պէտք է ուրեմն մեզի բացարձակ
սկզբունք ընտրենք ազուն մէջ ձեռ-
ներեցութեան, լուրջ հետաքրքրու-
թեան, անվճատ ու խիզախ կորովի
կայծերը, փոռելու եւ զայն արծար-
ծելու գործը:

Աւելի կայ երկիր մը, ազգ մը
որուն մանկավարժները մեծագոյն
զերը կրնան կատարել այդ մասին,
առանց երկբայութեան մեր այսօր-
ուան հայութիւնէ, այնքան խոշ-
տանքուած, այնքան սպառնալիքնե-
րու տակ ընդարձացած, եւ որ սա-
կայն, հակառակ այս ամենուն,
գեռ ազգ մը նախ կը յամարի: Ու-
րովհետեւ, իսկապէս մեր այսօրուան
զարգացման մէջն է որ պիտի պատ-
րաստուի, պիտի ծրագրուի ժողովուր-
դի մեր բազմազգ կախուած է:

Պէտք է խոստովանիլ թէ հայու-
թեան ամէն մէկ անկիւնը մեծ ջանքե-
րը կը կատարուին այսօր սերունդը
լուսաւորելու համար, ոչ կամքը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (7)

ԽԱԽԱՐԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Բ. (Շար.)

Վարդգէս ստիպուած թողուց Պո-
լիսը: Կեդրոնականի մէջ խուզար-
կութիւն կատարուած ըլլալով Ոստի-
կանութիւնը, որպէս թէ վտանգա-
ւոր բաներ մը գտած էր անկէ, եւ
հին ու նոր կեդրոնականցի վարժա-
պետ, աշակերտ փնտռելով ծակը կը
թիւնէր: Եւ որովհետեւ Վարդգէս
իւր յեղափոխական բաւական ճանչ-
ցուած էր, եւ թէեւ վերջին գէպտե-
րուն մէջ ընտ. մատ ունեցած չէր,
բայց խորհելով որ, եթէ անգամ մը
ձեռք ինար, գոնարութեամբ պիտի
ազատէր օձիկը, որոշեց հեռանալ
Պոլսէն եւ արտասահման մնալ մինչ-
չեւ որ հալածանքները եւ խուզար-
կութիւնները դադարեն:

Վարդգէսի հօրը գործերն ալ բոլոր-
ովին խանգարուած էին: Մանուկ
աղայի խանութը աւարի տրուելէ
զատ, մեծաբանակ պահանջներ ու-
նէր թուրք փաշաներու եւ պէյերու
վրայ, գորս սակայն այդ օրերուն մէջ
կարելի չէր գտնուիլ, եւ միւս կող-
մէն նոր յանձնարարութիւններ բու-

ող հմտութիւնը կը պակսի, բայց կա-
րելորդ գեռ պակաս է: Չիկան ա-
ռողջ սովորութիւններ, անկաշկանդ
ու իսկատիպ նախաձեռնութիւններ
կենդանարար շունչ մը որ ոգեւորէ
ուսուցիչներն եւ ուսանողները, ու
պահպանէ սզը բարոյականապէս ու
քաղաքականապէս գահավճիռէ, ան-
կուժ մը ուրկէ ոչ ցեղային առանձ-
նայատկութիւնները, ոչ պատմական
անցեալը չեն կրնար գերծ պահել
զմեզ: Երբ մեր ետին ունինք դարա-
ւոր ստառապանքներու, մարտիրոսու-
թեանց ու հալածանքներու ահաւոր
թուականները, ու գեռ երկէ կա-
տարուած զարհուրելի վայրագու-
թեանց անարկու յիշատակը, կարծէ
որ քիչ մը սնդրադատանք ու աշ-
քերխոս չորս բանանք: Երբ ազգ մը
իր անկուժին կը ժողովայն անկեղծ
ու վեհ հոգիները ի գոռը ձայն կը
բարձրացնեն, ժողովուրդը երբէք
տրամադիր չէ զանոնք լսելու: Ան-
նիրայ չի կրցաւ կարթութիւնն ազա-
տել իր կործանումին, ոչ Գեմասե-
նէս Աթէնքը, եւ ոչ ալ նոյնիսկ Յի-
սուս Հրէաստանը իր կործանումէն,
որովհետեւ ժողովրդին մեծամասնու-
թիւնը կրքերու, եսամոյ ու չուսյա
վայելքներու մէջ յիփացած՝ մոռցած
էր զոհողութեան ընկերական պար-
տականութիւնը եւ կորսնցուցած էր
համբաւանութեան ոգին: Իժարագու-
թիւնը մարդիկը եսամոյ ու անձն սակը
կը դարձնէ, ու անգամ մը որ այդ
կիրքը ազգի մը մեծամասնութեան
մէջ մտաւ գտնէ, ալ անհնարին է ա-
նոր անկումը կատարել:

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

(Շարունակելով)

—(—)

լորովին դադարած էին. գործչիկար
այնպէս որ իր ընտանիքը ապրեցնե-
լու համար պարտքեր բնելու ստիպ-
ուած էր:

Վարդգէս որ հօրը գրամական կա-
ցութեան մտէն գիտակ էր, այն
վտանգութեամբ կուգար Պուլկարիա
թէ իր ունեցած անժխտելի կարողու-
թեամբը, արժանիքովը չուսով պիտի
կարենար գո, ծ մը ճարելու իրեն, եւ
իր ապրուստը հայթայթելէ զատ օգ-
նել նաեւ իր ընտանիքին:

Եւ ինչո՞ւ չէ, բարձրագոյն կըր-
թութիւն մը ստացած էր, գործելու
և տանդ ունէր եւ օգտակար ըլլալու
ընդունակութիւնը շատոնց ապացու-
ցած էր, պէտք էր զինքը փնտռելին
եւ ձեռքէ ձեռք խլելին:

Սակայն Վարդգէսի այդ գործ
ճարելու յոյժը չուսով մարկցաւ,
Վառնայի մէջ այնքան ցուտ էին
իրեն պէս անգործներ, որ չէ թէ
միայն գործ մը չի կրցաւ գտնել ան-
միջապէս, այլ եւ քովը եղած քիչ մը
գրամի ալ չուսով սպասեցաւ:

Վառնա ապաստանած հայերուն մէջ
կը գտնուէին իր հին ծանօթներէն,
զարոյցական ընկերներէն, ուսուցիչ-
ներէն, պաշտօնակիցներէն շատեր
որոնք իրեն պէս գործի կը սպասէին,
մէկուէն հինգ ֆրանք, միւսին տասը
ֆրանք փոխ տալով, ինք ալ սկսաւ
փ խառութեան գիւնը անօթի չի մնա-
լու համար:

Ստիպուած գիւնը հօրը որ գրամ

ՏԵՂԵԿԱԲԵՐ

Ռուսճուզէն կը գրեն:

«Նստ մը հայ գաղթականներ
թշուառ ու անգործ մնալով իրենց
ընտանիքը ապրեցնելու անկա-
րող են, եւ ստիպուած են իրենց
զուակները զրկել տեղւոյս գեր-
մանական օրբանոցը: Բայց այս
հաստատութիւնը երբեք մեզի չի
զոհացնէր եւ իր վայրենաբարոյ
ընթացքով մեր ցաւերուն վրայ
նոր մը կաւելցնէ: Հազիւ հազ
չոր հաց մը միայն սպասուած,
որբանոցին մէջ ամենէն տմարդի
ու ամենէն կոպիտ ընդունելու-
թեան մը կը բաղխին: 8—9 տա-
րեկան տղաքներ անխնայ կը
ծեծուին միակով, ոչ հարցնող
կայ, ոչ փնտռող: Անցեալ օր, որ-
բանոցին անօրէնք այն աստիճան
ծեծեց պղտիկ տղայ մը որ, մարդ
մը եթէ գաղան ծնած ըլլար,
գարձեւ այդ տեսակ վայրագու-
թիւն մը չի պիտի ընէր: Եղուն
կունակը մտրակին հարուածնե-
րէն կապու ոցած ե վերքեր գո-
լացած էին: Այսպէս անխնայ
ծեծուելուն պատճառը խեղճ աղոց
արձակուրդի ժամանակ հայերէն
խօսիլն էր: Այս վայրենութիւն-
ները գործողները այն տեսակ
մարդիկներ են, որոնք շարու-
նակ «Տիրոջը խօսքը» իբր թէ կը
քարոզեն ժողովրդին: Ի՞նչն էր,
կուէլցնէ նամակագիրը, տ-
տոնց որբ նոցներէն երբեք բա-
րիք սպասողներ չենք, բայց ինչ
ընենք չքարոզութիւնը մեզի ստի-
պած է մատղաջ հոգիներու այդ
գահիճներուն յանձնել մեր զա-
ւակները, քիչ մը թեթեւցած
ըլլալու համար լոկո»:

Կերեայ թէ Ռուսճուզի պատ-
ուելիները Գրիտոսի «որ ոչ լուսիցէ
ուեկամբ» պատուէրը ճշդութեամբ
կատարելու շատ փոյթ կը տա-
նին: Արգեօք ինչո՞ւ Գրիտոսի
միւս պատուէրներուն համար ալ
նոյնքան բախնդիր չեն ըլլար
մեր յարգոյ պատուելի քարոզիչ-
ները: Կը սպասենք խնդրին լու-
սաբանուելուն:

Սօֆիանէն «Ոմն» կը գրէ:

«Տեղւոյս քահանան նախկին
թաղ. խորհրդոյ անդամ մը
հետ, իր մասնաւոր կնիքով կրն-
քուած (որովհետեւ այս քահանան
կնիք մը փոռել տուած է, ուր
ինքզինքը Սօֆիաի հայոց հո-
գեւոր կառավարիչ կը կոչէ)
թուղթ մը զրկած էր Արտաքին
Պորժ. նախարարութեան, օրպէսզի
կառավարութեան տեղւոյս վար-
ժարանին յակացուած դրամը
յանձնուի: Կործանելով թաղ. խոր-
հուրդը, առանց խնդրէն տեղե-
կութիւն ունենալու ինքն ալ ըստ
օրինի գիւմուժ կընէ: Ասոր վրայ
նախարարութիւնը խնդրին իրա-
ւէկ ըլլալով, կիմանայ քահա-
նային պաշտօնէ դադարած ըլլալը
եւ կը պահանջէ որ նորընտիր
թաղ. խորհրդոյ կնիքով կրն-
քուած պաշտօնական ստացադիր
մը բերուի իրեն դրամը յանձ-
նուելու համար:

Կերեայ թէ որբերու հաշիւէն
խրացուցած 54 ֆր. էն յետոյ
հիմակ ալ արժանապատիւ քա-
հանան դարոցին նպաստը կուզէ
իր գրպանը անցնել: Գէշ դիտա-
ւարութիւն չէ շիտակը»:

խասող ուժերու սուստութեան գի-
մաց գործերու ուսուցութիւնը կը սի-
րէր:

արգէսի վիճակը հետզհետէ ան-
տանելի կը գտնար, եւ երկար վա-
րանումներէ յետոյ որոշեց անձամբ
փնտռել գործը, քանի որ զինքը
հարցնող փնտռող չը կար:

Ներկայացաւ Վառնայի գարոցնե-
րու հոգաբարձութեան ասինապետին,
յայտնեց անոր լր վիճակը եւ հասկցուց
թէ պատրաստ է գարոցին մէջ պաշ-
տօն մը ստանձնելու շատ թեթեւ գնով
մը:

— Հիմա պաշտօնեցի պէտք չու-
նինք ըստ փորը կուշտ ասինապետը
ստանութեամբ, եթէ սպագային հարկ
ըլլայ իր կանչէնք քեզի:

Վարդգէս աշակերտներ փնտռեց,
շատ համեստ գնով գասեր աւանդե-
լու, եւ իրաւ բաւական թուով գտաւ,
բայց ամէնքն ալ կը խոտանային
վճարել սպագային:

Վառնայի հայ վաճառականներու
գուները այն ատու ու պէս զի ուեւ
գործ մը ճարէ անոնց վաճառատուն-
ներուն մէջ:

— Հիմա մարդու պէտք չունինք,
ապագային երբ հարկ ըլլայ կը յիշենք
քեզի ըսին ամէնքն ալ:

անոնցի մէջ այդ օրերուն սկսած
էր հրատարակուել շարժառիթներ
Արդարադիւն անունով, Վարդգէս ո-
րոշեց գրականութեան մէջ ապրուստի
թիւններ չէր աւելն, ամէն տեղ աշ-
միջոց մը փնտռել: Եւ Արդարադիւն

Ամերիկայէն ալ քահանաներու գէմ գանգաւորներ կը լսուին : Նիւ-Եօրքէն «Լիբաժ» կը գրէ թէ տեղւոյն մէջ քահանան այնքան անհոյ , այնքան թոյլ է իր պաշտօնին մէջ որ , ամիսներով նորածին տղաներ անկնունք կը թողու , եւ կամ այնքան անպարտնօք կը կատարէ որ , եկեղեցական կարգուսարքը բոլորովին բարձր թողի կրլլան : Անցեալին քահանաներէն մէկը անհոգութեամբ այնքան ջուրը տաքացուցեր է որ կնունքի պահուն խեղճ տղան կատարելապէս խաչեր է ջուրին մէջ : Թնոյքներուն աչքը վախցած ըլլալով , հիմայ մինչեւ որ տղան 4-5 տարեկան ըլլալ մկրտել չեն տար եղեր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊՈՒԼԿԱՐԻԱ ԵՒ ԲՈՒՄԱՆԻԱ

Ռուսական Պուլկար ծանօթ վէճը իր սպառնական հանգամանքը կորսնցուցած է բոլորովին . երկու կողմէն ալ անվերջ բուռն ծանուցագրեր փոխանակուեցան , սակայն առանց դրական հետեւանք մը ունենալու : Մագած անհամաձայնութիւնները վերջապէս զիւրապարտական անհասկացողութեան մը վերագրուեցան : Արդէն հոս , կառավարական շքերջանակներու մէջ , կարեւորութիւն չէր տալու այդ ազդեցիկ ուսման թերթերուն «չանթախ» ու կառավարական ծանուցագրերուն սուրկի բեղունութեամբ :

բազմանալուն : Քաղաքակիրթ Պուլկար մէջ մեծ ցոյցեր ու միջոցներ սարքուեցան , շատ պուլկար խանութպաններու ապրանքները աւարի արուեստն եւ բազմութիւն բանջարեղէնի պարտէզներ խուժանին սաքի կոխան եղան , 50 ի շափ խուզարկութիւններ , ձերբակալութիւններ ու արտօրանքներ տեղի ունեցան . խոկ զարգացած մասուլի կիմնական ուսուցչի մը սպանութիւնը—անհատական գործողութիւն մը—ազդեցիկ զգացումներու հետ փորձեց յայտել ու լրբօրէն պարծենալ սկսաւ «պալքանեան վայրենիներ , անգրգանութեան բարբարոսներ» անուանելով պուլկարները :

Իսկ Սօֆիայի մէջ , այս գիւրաբորքը գրայիին յարուցած ոգորմնի վայնասուններուն հառակ , խաղաղութիւն հակապակեր մը կը պարզուէր , օրինակելի պաղարիւնութիւն մը , որ գնահատելի առաքինութիւն մըն է գիւնապարտական ասպրէզին մէջ : Միայն սպառնալիցութեանց խուլ ու հաւոր նախապատրաստութիւնները շոչափելի կերպով ցոյց կուտային թէ , փոքրիկ Պուլկարիան իր անքաղաքավար գրայիին բերնին չափը տալու պատեհութենէն երբեք խոյս տալու մտադրութիւն չունէր : Գուցէ լուրջ ու ծանրակշիւ գէպքեր պատահէին պալքանեան թերթիկի մէջ , եթէ Ռուսիա իր չինական տիրապետութենէն ետ չի քաշուէր եւ իր ուշագրութիւնը Դանուբի եզրքները չի կեդրոնացներ : Ռուսական յայտարարութիւնները բոլորովին հակըն-

թաց ուղղութիւն մը տուն Պալքանեան իրերու կացութեան , աւստրիական թերթերը սկսան յանուն ռուսական բարեկամութեան սանձ քաշել , հանդարտութիւն ու համեմատութիւն քարոզել :

Իբր ատր պայցոյց մենք մէջ կը բերենք «Պուլկարէ շէր շիւլաբ» խմբագրին իյսան Ֆէրտի-նանտի պալատականներէն բարձրաստիճան անձնաւորութեան մը հետ ունեցած խօսակցութիւնը այս խնդրին առթիւ .

«Ռուսական սպառնալիցութեան լուրը ստույգ է , թէեւ իշխանին շրջանակներուն մէջ հաւատացած են թէ վէճը այնքան սուր կերպարանք չի պիտի ստանայ , Սակայն պետութեան սպահովութեան համար Պուլկարիա ստիպուած է ձեռք առնել սահմանի պաշտպանութեան միջոցները : Իշխանը չի փոխեց նախապէս գծուած ծրագիրը , հակառակն , ու երկրէն դուրս մնաց . որովհետեւ երբեք լուրջ կարեւորութիւն մը չէր տար անոր :

Իրաւ է , Բրօք . Միխայիլանօ մարտիրոսի տեղգատուելիք մարդ մը չէ , բայց և այնպէս , ամէն բան մէկգի , ով որ զայն սպաննած է յիմարութիւն է գործած : Կրնար այդ երիտասարդ , այդ ապստամբ դեռաբոյս հոգին , աւելի օգտակար ու նպատակաշարժար գործի մը համար անձը նուիրել , Ոճրագործը ո՛չ պուլկարահպատակ է և ո՛չ ալ Սօֆիա սպարած : Բայց ռուսականաց պուլկարներուն ուղղած նախատինքները Մակեդոնական կոմիտէն անդրադար-

ձուցին : Անոր վարժունքը ամբողջ պուլկար աղբին իղձերուն ու զգացումներուն հետ համաձայն է : Անիկա զօրեղ ու անկախ կազմակերպութիւն մըն է , որ պիտի մաքառի աներկիւղ ամէն բանի ուժի դէմ :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հետաքրքրական վէճ մը բացուել է հանգուցեալ Այվազովսկիի ժառանգորդներուն և Թէոթոսիա քաղաքին միջեւ : Խնդիրն այն է որ , հանցուցեալին կտակին համաձայն քաղաքին կը պատկանին այն բոլոր նկարները , որոնք մահուան օրը կը գանուէին հանգուցեալին պատկերասրահին մէջ , մինչդեռ Այվազովսկիի վերջին չորս ամենալաւ նկարները Թեթոթոսիա բերուած էին , և պէտք էր որ մանէին հանգուցեալին պատկերասրահը : Մահուան օրը այդ նկարները քաղաքն էին , բայց ինչ ինչ պատճառներով պատկերասրահը չէին տարուած , և այդ պարագան սուրիս տուել է հանգուցեալին ժառանգորդներուն ստարկելու թէ՛ անոնք քաղաքին չեն պատկանիր , այլ իրենց : Այդ նկարները կը գնահատուին 100,000 ռուպլի : Թեթոթոսիայի մէջ բացուել է հանգուցեալին վերջին նկարներուն ցուցահանդէսը , ուրկէ գոյացած գումարը պիտի յատկացուի հանգուցեալին վրայ մահարձան մը կանգնել :

Թերթին խմբագրատան տեղը ու խմբագրատանին ա՛ռնը հակնալով ատու մը կանուխ գնաց հոն :

Վարդէս Պոլսոյ մէջ բաւական այցելու ըլլալով չայ խմբագրատաները եւ մօտիկ յարաբերութեան մէջ եղած ըլլալով խմբագիրներու հետ , բաւական լաւ գողափար կազմած էր հոյ խմբագիրներու նիւթակաշի մասին , բայց որչափ մեծ եղաւ իր զարմանքը երբ խոյր չէնքի մը տեղ ինքզինքը նկուզի մը առջեւ գտաւ , որուն ճակատը խոչոր տառերով գրուած էր .

«Արդարութեան խմբագրատանը» Կեանայրիկ նեղ ու երկայն սենեակ մըն էր , որ իր լոյսը կանէր գունէն եւ Իրիկ պատուհանէն , մէկ կողմը քստաներու առջեւ երկու գրաշարներ գանգաղօքէն կաշխատէին , միւս կողմը մարդ մը սեղանի մը առջեւ նստած գիր կը գրէր , ու ամէնը աչափ էր :

Վարդէս մտեցաւ մարդուն եւ սովորական բարեւէ ետքը հարցուց .

— Ո՛ր կրնամ գտնել արդեօք խմբագրատան Պ. Ուլուքեանը :

— Ես եմ ձեր փնտռած մարդը . բնաւ գիր գրողը , եւ գրիչը ձգելով անմիջապէս ոտքի ելաւ եւ իր սթուրը հրաժարուց Վարդէսի :

Վարդէս խմբագրատանէն յետոյ նայուածքը անգամ մը պտտուց խմբագրատանին վրայ : Յիսուհի մօտ մարդ մըն էր , միջնասակ , նիհար ,

խորշմած այտերով , աղերեկ , անխնամ մօրու : ով եւ հինաւուրց զգեստներով :

Վարդէս անմիջապէս հասկցաւ որ իր այդ գիմուռն ալ բան մը չի պիտի ծնէր , քանի որ խմբագրատանն ու խմբագրատանը այդչափ արգահատելի վիճակի մը մէջ կը ներկայանային , բայց առանց զգալի ընել տալու իր յուսախաբութիւնն ու չփութիւնը , ուղեց այս փորձն ալ անցնել : Նստաւ հրաժարուած աթոռին վրայ , Ուլուքեանն ուրիշ աթոռ մը առնելով անոր քով նստաւ . եւ ձխախ տի ծրարը առնելով սեղանին վրայէն հրաժարուց Վարդէսի :

Վարդէս յայտնեց որ ձխելու սովորութիւն չունի . Ուլուքեանն գողցող մասներով սկսաւ արագաբար սիկար մը ոլորել միտնգումայն հարցնելով Վարդէսի թէ որու հետ սենտուելու պատիւը ունի :

Վարդէս երկար բարակ իր ով ըլլալը իմացուց , եւ յայտնեց թէ փափաք ունի հրապարակագրութեան ասպարէզը մտնելու :

Ուլուքեանն որ ծայրայեղ բարութեամբ մը մտիկ կընէր , անմիջապէս հասկցաւ իր այցելուին բուն նպատակը , արդէն մինչեւ այդ օրը ուրիշ չատ մը այցելուներ ընդունած էր , որոնք փափաք յայտնած էին իր թերթին աշխատակցիլ վճարուածով , եւ հազարերորդ անգամն ըլլալով Ուլուքեանն Վարդէսի ալ բացատ-

րեց թէ . թերթը իր ներկայ վիճակին մէջ հազիւ հազ իր ծախքերը կը գոյներ եւ թէ իրենք երկու խմբագիրները—մէկը այդ միջոցին քաղաքէն բացակայ էր—գիւտ ոչ մէկ շահ չէին ընդուներ : Ուլուքեան իր խօսքը վերջացուց խնդրելով Վարդէսէն որ իր աշխատութիւնը չի զլանայ . խոստանալով որ սպազային երբ թերթը աւելի տարածուէր , շահ մը ձգէր , զինքն ալ անմասն , անբաժին չէին թողուր :

Վարդէս խոստացաւ աշխատակցիլ ու դուրս ելաւ :

Ալ բոլորովին վհատած էր , ամէն գուռ զարկած էր , ամէն կողմ սպազայի համար ստատ առատ խոստումներ կային մինչդեռ իր ներկան հեղհեղէտ կը մթնար , անտանելի կը դատար :

Վարդէս ծայրայեղօրէն զգոյնոտ , աշխատասէր ու ընդունակ , չունէր սակայն կամօք այն մեծ ոյժը կեանքի փորձութիւններուն դէմ կռուելու , զիմանալու կորովը որ զինքը երկար տանն կանգուն պահէր բոլոր այդ յուսախաբութիւններուն մէջ :

Կանի իր ձեռնարկները ապարդիւն կըլլային . քանի նիւթակաշի աագնակները կը պաշարէին զինքը այն քան կը սկսէր մթննալ իր մէջ առողջ մտածողութիւնն ալ : Ը հաւատարմը պակաս էր ամէն բանի վրայ , կատարեալ յոռետես մը եղած էր , հետեւ կը փախչէր իր ծանօթներէն ,

բարեկամներէն , որոնց երեւնալու կամենար իր այդ վիճակին մէջ , եւ ժամերով կերթար առանձին թափառիլ քաղաքէն դուրս բուրաստանները :

Ինք որ խաղաղ ու հանդարտ գործունէութեան մը համար պտտրատուած էր , սոսոր ստիպուած էր կռուիլ կեանքի ամենէն վտանգաւոր թշնամիին անօթութեան դէմ , եւ իր ոյժերը բոլորովին անդօր էին , այդպիսի կռիւ մը մղելու համար :

Դեռ երկու միսթարակն կէտ կար իր այդ ստապանքի օրերուն մէջ որ զինքը կեանքին կը կապէր , մէջ մը քանի մը գողթական աղքատ աղաքներ կային , որոնց ձրիաբար դասեր կուտար , եւ երկրորդ իր խոստումներ համեմատ կը գրէր Արդարութեան թերթին : Սակայն քիչ քիչ անոնցմէ ալ ձանձրացաւ , հետզհետէ իր դասերը կարճուց . ընդհատեց , եւ իր գրած յօդուածները , որ առաջները առողջ մտածողութեամբ ամենէն կը հաւնուէին , սկսան գունատիլ եւ իր հոգեկան ցուազար վիճակին կնիքը կրել :

Վարդէս սոս ձանձուր մէջ թերեւս բոլորովին ոչնչանար , եթէ յանկարծ նոր լոյս մը զինքը չը վերստեղծէր զկյի կեանքը , զէպի նոր գործունէութիւնը :

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԻԱՆ

(Շարունակելի)

-- Տատեան Յարութիւն փա- շան, որ հիւանդ էր առողջացած ըլլալով փութացեր է Երևոյնը երթալ անմիջապէս, իր երախտագիտական զգացումները, յայտ- նելու Համբարն: Իցի՛ր թէ Շիշ- լիի ճամբան բռնած ըլլար, որով հարկ չի պիտի մնար Երևոյնը եր- թալու:

— Բարիքէն կիմացնեն թէ՛ մէկ քանի բարեսէր ուսասնայե- րորնք որբախնամ գործին մէջ ալ կարեւոր մասնակցութիւն մը ու- նեցած էին, յօժարած են իրենց գրպանէն վճարել Հայոց մատու- ուին շինութեան ծախքը: Եւնքը կառուցանելու համար՝ յարմար տեղ մը հող կը փնտռուի եղեր:

— Սիմֆէրոօքիի հարուստ հայ մը Պ. Աթանաս Օգոսինքեան 50 հազար ռուպլի ծախսելով՝ որո- շեր է Սիմֆէրոօքիի մէջ աղքատ հայերու համար բնակարաններ շինել տալ, Յիկանջը խօսի մեր հարուստներուն:

— Ս. էլմիածնէն կը գնեն թէ՛ տեսուչի և ուսուցիչներու անուան- ման խնդիրը դեռ բոլորովին վերջ չէ գտած: Ղեկավարներ վար- շութիւնը յայտարարութիւն մը հաներ է, և ուսուցչութեան հա- մախարաններէ վճարուած ուսու- ցիչ մը կը շփոթուէ, շաբաթական 18--19 ռուբլի համար 1500 շրուպ- լի տարեկանով:

— Սպաղանքէն Ռի. թէրի տրուած տեղեկութիւնները կիմացնեն թէ հրամանատար Ալի փաշա, որ Սպաղանքի շարքին հետեւանքով Բաղէշի զինուորական հրամա- նատարի պաշտօնէն ետ կանչուած էր, օգոստ. 22ին այդ քաղաքէն Երզնկա մեկներ է:

Մեկնման նախորդ օրը Ալի փաշա իր ներկայութեան կառա- վարութեան պաշտօնատունը հրա- լիրեց Բաղէշի հայոց առաջնոր- դը և գաւառական ժողովի աշ- խարհական անդամները և պա- հանջեց որ իրենց ստորագրու- թեամբ վաւերացնեն իբր թէ Սասուն գաւառի բնակիչներէն զրկուած ուղերձ մը որ 20 ստո- րագրութիւն կը կրէր: Ուղերձին մէջ ըսուած էր որ եւրոպական թերթերու Սպաղանքի մասին գրածները բոլորովին յերիւր- ուած ստույգութիւններ էին: Թէ ու չինչ չէ պատահած Սպաղանքի մէջ խաղաղութիւնը վրդովող, և թէ շնորհիւ Սուլթանին հոգածու- թիւն և Ալի փաշայի հայրա- կան խնամքներուն, հանդարտու- թիւնը միշտ կը տիրէ:

Առաջնորդն ու իր ընկերները մերժեցին ստորագրել առարկե- լով թէ իրենք տեղեկութիւն չու- նին Սպաղանքի մէջ անցած դարձ- ձածէն, և թէ պէտք է տեղւոյն վրայ քննութիւն մը բանալ, Ալի փաշա նախ հաւանեցաւ, բայց քանի մը ժամ ետքը փոխեց որո- շումը և սպառնալիքներ սկսաւ ընել, եթէ ընդդիմանան ուղեր- ձը ստորագրելու: Ասոր վրայ

հայերը տեղի առին և ուղերձը ստորագրեցին:

— Վանի ուսական փոխ հիւ- պատուը Բաղէշ հասաւ օգոստ. 21ին և հետեւեալ օրը ճամբայ ելաւ դէպի Սպաղանք: Ինչ վեր- ջը զինուորական նոր հրամանա- տար Սալիհ փաշայ բազմաթիւ հետեւորդներով նոյն վայրը մեկ- նեցաւ, և օր մը վերջն ալ Բա- ղէշի վայրին հասաւ ջարդին վայ- րը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Փամանակէ մը ի վեր դարձեալ կառավարութիւնը սկսած է հա- յերէն բաւական թուով ձերբա- կալութիւններ ընել: Ոստիկա- նութիւնը կը պնդէ թէ երկու հայ յեղափոխականներէ պատ- րաստուած գաւառորութեան մը հետքը գտած է, որոնցմէ մէկը, Արզուեան, ամերիկեան անցագիր ունենալուն Մ. Նահանգաց գես- պանը Բ. Գրան դիմում ըրած է զայն ազատելու համար, իսկ միւսը իբրև ուսասնայատակ հիւ- պատուարանը կը պահուի:

Պոստի հայ պատրիարքն ալ նախարարութեան դիմումներ ը- րած է, խնդրելով որ բանտար- կութեանց վերջ մը տրուին և գոնէ անմեղ բանտարկեալները ազատ արձակուին: 50 հոգի ա- զատ արձակուեր են և 50 հոգի ալ իրենց ծննդավայրերը աք- սորուեր են: Դեռ 200 ի մօտ հա- յեր բանտը կը պահուին:

— Տամաս Մահմուտ փաշա վերջերը բաց նամակ մը ուղղած է հայ յեղափոխականներու որով կը հրաւիրէ զանոնք միաբանել իրենց հետ և համերաշխութեամբ գործել, որպէս զի կարելի ըլլայ վերջ մը տալ թրքական արդի բէժիմին:

— Պարսից ճահին Պօլիս մեկ- նիլը շատ գէշ ազդեցութիւն ը- րած է Ռուսիոյ վրայ: Այս վեր- ջինը այնպէս կը հաւատայ թէ ճահը Պոլսոյ մէջ Գերմանական ազդեցութեան պիտի ենթար- կուի, ի վնաս իրեն շահերուն, քանի որ Պոլսոյ մէջ Գերմանական ազդեցութիւնը աւելի զօրաւոր է:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Գերմանիա ինչպէս նախորդ թուով գրած էինք, բանակցու- թեանց առաջին պայման կը նկատէ յանձնումը ոճիւրները գըր- դողներուն, որոնց պարագլուխ- ներն են մասնաւորապէս կայսրու- հին և թուան իշխանը:

Անգլիա, Աւստրիա, Իտալիա, Գերմանիոյ առաջարկութիւնը ընդունելու մտադրութիւն ցոյց կուտան: Պրանսա կզգուշանայ դեռ իր կարծիքը յայտնելէ և

կը սպասէ Ռուսիոյ պատասխանին: Միացեալ Նահանգաց կառավա- րութիւնը այս անկերպարան վի- ճակին շուտով վերջ մը տալու փախաք յայտնած ըլլալով հան- դերձ տակաւին որոշում մը չէ տրուած:

Ճարոն ալ, Ռուսիոյ հետ, կայսրուհին նկատմամբ յարգա- լիր զգացումներ ցոյց կուտայ և կը ցուցնէ թէ կայսրուհին եռա- ցումը պարզապէս կը վտանգէ կայսրութեան ամբողջութեան պահպանումը: Կը գտնարացնէ մեծապէս խաղաղութեան նշանակ- ցութեանց շուտափոյթ ելքի մը յանգումը:

Միացեալ Նահանգները մտադիր են իրենց Բէքինի զօրաց թիւը նուազեցնել և միայն դեսպանա- տունը պաշտպանելու համար հարկ եղած թուով զինուոր թո- ղուլ Բէքին: Երբէք դիտաւորու- թիւն չունին զգրմանացուց միա- նայու, եթէ այս վերջիննե- րը ուզեն յարձակողական շար- ժումներ կատարել Վալտերիչէի հրամանատարութեամբ: Այս պայ- մաններու մէջ Գերմանիա յանձն պիտի առնէ՞ ինքնագլուխ զոր- ծելու և ծանր պատասխանատու- ութիւն մը ստանձնելու:

Ինչ որ ալ ըլլայ արդէն կարե- լի է չայլմէն գերմանիոյ առա- ջարկը շուրջ ինկած նկատել, քանի որ «Սթանտարտ» կիմացնէ թէ իշխան թուանը պետական բա ձր. խորհրդին նախագահ կար- գուած է, թուանկ-Պու. Սեանկը հարաւային զօրաց վերին հրա- մանատար, իսկ Ջոքսէրներու պարագլուխ Ջունկը անդամ պե- տական բանձր. խորհուրդին: «Սթանտարտ» նաեւ ցաւ կը յայտնէ Միացեալ Նահանգաց բռնած ընթացքին համար, որով կը քաջալերէ Չինոյսները:

— Շանկայէն հեռագիր մը կի- մացնէ թէ կայսրն ու կայսրու- հին բացարձակապէս մերժեր են թուան իշխանէն և Պօքսէրներու պալատ մը շինել իրենց գըտ- նուած տեղը և հոն հաստատուիլ իբրև նոր մայրաքաղաքի մը մէջ:

— Անկլո-Ս. մերիկեան 1500 հո- գիէ բաղկացած զօրագունդ մը շորս թնդանթով Լիու-Քու-Չէու հասաւ, ուրկէ գիշեր ատեն ան- ակնկալ կերպով յարձակեցաւ Բու-Պու-Չէուի վրայ: Պօքսէր- ները յանկարծակիի եկած՝ ցիր ու ցան եղան 50 անձի կորուստ մը տալով:

— Բէ-Չի-Լիի մէջ երեք մի- սիօնար, երկու իտալացի վար- դապետ ու բազմաթիւ բողոքա- կան պատուելիներ շարդուեր են: Ստուգուեր է որ տեղւոյն կառա- վարիչը իր ներկայութեան զա- նոնք գլխատել տուած է:

— Մարաշխտ Վալտերիչէ քըն- նութիւն մը ըրեր է միջազգային զօրաց, որոնք 5000 ի մօտ էին և մեկնեցին Թաքու:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Չօրավար Ռօպէրդ. կը հեռա- գրէ թէ, որքան որ Օրանի հա- րաւային կողմը կատարեալ ան- գորրութիւն մը կը տիրէ, սա- կայն բոլորովին տարբեր տեսա- րան մը կը պարզուի թրանսվալի արեւելեան և արեւմտեան կող- մերը, ուր կուր անդադար կը շարունակուի և անգլիական զօ- րախումբ մը Վալտերիչի մէջ Պօքսէրներէն պաշարուած է:

— Եօհաննպուրկէն կը հեռա- գրեն թէ մէկ երկու օրէն պա- տերազմը պաշտօնապէս դադրած պիտի յայտարարուի: Ռուս թեր- թերը այս յայտարարութիւնը մի- ջազգային օրէնքներու բռնարա- րում մը կը նկատեն, ըստ որում յաղթողը երբեք իրաւունք չունի պատերազմը դադրած համարել, մինչեւ որ յաղթուողը հպատա- կութիւն չի յայտնէ:

— Փորթուկալի կառավարու- թիւնը օրինաւոր կը գտնէ թրանս- վալի և Օրանի կցումը Անգլիոյ հետ, և կը յայտարարէ թէ ալ չի պիտի ճանչնայ Գրիւկէրի իշ- խանութիւնը և անոր հիւպատու- ները:

— Անվէրսի մէջ յանձնախումբ մը կազմուած է նախագահ Գրիւ- կէրի ի պատիւ ցոյց մը սարքե- լու համար:

Յիշեալ յանձնախումբը որոշած է պէլճիքական նաւ մը մինչեւ Ֆլէտինկ զրկել նախագահին բարի գալուստ մաղթելու համար:

— Գրիւկէր իր եւրոպա այցե- լութեան ատեն մտադիր է եղեր կոչում ընել Լահէճի որոշած ի- րաւարարական մարմին, որպէսզի քննէ իր խնդիրը և իր վճիռը յայտնէ:

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

«Վէսէլլօ» հայ դերասա- նական խմբին կողմանէ առաջին անգամ ըլլալով պիտի ներկայաց- ուի այս գիշեր ժամը ութուկէսին «Սիրոյ գաղանթը» խիստ ծիծա- ղաշարժ կատակերգութիւն 3 ա- րար:

«Ստանին ձագը» եղերգութու- թիւն 3 արար՝ Պ. Ճիվանի խմբ- րին կողմանէ:

Երգ և պար Տիկին Լիզայի և Օր. Գաթինայի կողմանէ: Արօպաթ՝ Օր. Գաթինայի կող- մանէ:

Գիտերը Ա.Մ.Ա.Ն

Ա.Չ.Գ

Ս. Խաչի տօնին առթիւ յառա- ջիկայ չորեքշաբթի օր յնար- ժում չի պիտի հրատարակուի: